

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՆԻԻԹԵՐ ԹՈՎՄԱՅ ՄԵԾՈՓԵՅՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ*)

Բ.

Թովման Արարատեան երկրից վերադառնում է Մեծոփայ վանքը. «և Կ ամ անդ կացեալ, բազում ջանիւ և առաքինութեամբ. ԼԵ ամ դաս ասելով ամենայն գրոց աշակերտելոց. և բազում յորդիս ի փառս ածելով և է աշակերտի գաւազան տուեալ»*: Այս խօսքերը մեզ համար կարեւոր նշանակութիւն ունին Թովմայի կեանքի տետրութիւնն ու ժամանակագրութիւնը կարգաւորելու վախճան տարի է տեսլ Թովմայի կեանքը Մեծոփայ վանքը ոտք կոխելու օրից սկսած և 35 տարի բուն վարդապետական գործունէութիւնն այդ վանքում: Եւ յիշաւ ՊԾԹ Թուից, երբ նա վարդապետական գաւազան և իրաւունք ստացաւ դաս ասելու, մինչև ՊՂԵ, նորա մահուան տարին, ուղիղ 35 տարի է անում: Մակարեւելով մեր քննութիւնը Թովմայի Սուհարայի և մանկութեան ուսման շրջանների մասին, Մեծոփ մտնելը պէտք է նշանակենք 1386 թուին և ծնունդը 1376—1379 թուերին:

Բացի Կիրակոսի վերոյիշեալ խօսքերից՝ Թովմայի վարդապետական—վարժապետական գործունէութեան մասին թանձրացեալ և ընդարձակ նկարագրութիւն չունինք: Բայց բազմաթիւ են, ի՞նչ և ոչ լրիւ հաւաքուած, այն յիշատակարանները, որոնց գրիչները իբրեւ ժամանակակից կամ Թովմայի աշակերտ պատկառանքով են խօսում նորա կեանքի սրբութեան և վարժապետական հռչակի մասին: Նորա աշակերտների մասին կցկտուր տեղեկութիւններ ունինք նաև իւր իսկ յիշատակարանների մէջ: Թովման ժամանակակիցների աչքում ոչ միայն ընտիր գրիչ էր, որի ձեռքով գրւուած ձեռագիրներն ունինք Մ. Աթոռի մատենադարանում և ուրիշ տեղեր, այլ և գրչութեան արուեստի նշանաւոր ուսուցիչ: Կիրակոսի խօսքերի համեմատ «ուսոյց Ի՛ր ընտիր գրագիր»**, որոնցից մի քանիսը տպագայում նշանաւոր հանդիսացան:

Թովմային աշակերտած եօթ վարդապետներից և 24 ընտիր գրիչներից միայն մի քանիսի անունը գիտենք: Դոցա մէջ իւր աստիճանով առաջին տեղն է բռնում Արճիշու և Մեծոփայ վանից Յովհաննէս եպիսկոպոսը, որին Թովման ՊԶԴ (=1435) թուի յի-

*) Տես Արարատ 1913. զեկտեմբեր 4154—4161:

* Նոր Նիւթեր. Ար. 744/5.

** Նոր Նիւթեր. Ար. 742.

շատակարանի մէջ «հոգևոր որդեակն մեր Յոհնէս եպօս Կաթողիկոս» (Մեծոփայ) է անուանում: Նա Թովմայի հետ մասնակից էր 1441 թուի ժողովին: Յովհաննէս եպիսկոպոսին յիշում են Ղազար գրիչ ՊԷԶ (=1427) և Ներսէս գրիչ ՊԶԹ (=1440) թուերին*: Առաջինը պարզ յայտնում է, թէ նա Թովմայի աշակերտն է: Վարդապետ աշակերտներից Թովման յիշում է «զաշկտլ կըրքա զՍփս վ՛դտ, զԱտոմ վ՛դտ, զԶաքարէ վ՛դտ, որ կան յաշխտութի Կաթողիկոս տառից»: Նոյն վարդապետներից ոմանք յիշուած են և մի երկրորդ յիշատակարանի մէջ*: Այդ վարդապետների թուումն է և Կիրակոս բանասէրը, որ իւր ուսուցչի կենսագրութիւնը գրեց: Թովման ՊԶԳ (=1435) թուականի յիշատակարանի մէջ յիշում է ոմն Կիրակոսի, արդեօք նոյն է սա Կիրակոս վարդապետի հետ. անհաւանական չէ, թէն պնդել չենք կարող**: Մեռած աշակերտների թուում Թովման յիշում է Մկրտիչ վարդապետ Հիւսան, Ղազար, Մեսրոպ, Յովհաննէս Բաղիշեցի, «որ տաքած մահուամբ փոխեցն և ելին ի դառն կենցս և Յոհն քհնդրայր մեր: Եւ սուգ անմխիթար թղիին մեղ, զի ի զուրն կղև աշխտութի մեր վասն մեղաց մերոց»†:

Գրիչ աշակերտներից են, բացի վերոյիշեալ Ղազարից, որ Մեծոփայ վանքում գրած Ժամագրքի և Պատարագամատոյցի յիշատակարանում խնդրում է յիշել «զԹումա վարդապետ, որ զգիրս ուսոյց»†† և Յակոբ դպիր և Յովհաննէս կրօնաւոր, «որ բազում աշխատէր և չ'չրնաւ օգնկն եղին ինձ ի գրելս» (№ 2103/2065 Զ-ը): Յովհաննէս կրօնաւորը Կարապետ քահանայի որդին է†††: Նոյն տեղը յիշում է «Յովհաննէս գրագիր գրոց աշակերտ»: ՊԷԶ թուականին Թովման Ասպիւնակ գիւղում գտած Իզնատիոսի Ղուկասու մեկնութիւնը օրինակել է տալիս «հոգևոր որդոց խոց Թովմայ գրագրի և Յովհաննէս գրոց աշակերտի», որ անշուշտ նոյն է նախընթացի հետ: Հաւանօրէն այս Յովհաննէսն է որդի Յակոբ քահանայի և Սալչուկ խաթունի, որ ՊԶԳ (=1434) թուին, զեռ ևս սարկաւազ, գրել է մի Մաշտոց, ՊԶԲ

* Անդ. 765. 765. Տաշեան. Յուլի. 880.

** Նոր Նիւթեր. Ար. 759. 765.

*** Անդ. 764. (27): Մեր Մատ. № 4406/4582 շնորհաբեր. 508ր. խոշոր եւ անկանոն շեղադրովում «Կիրակոս բանասէր» գրիւ է Սրանդարի, Շահունի եւ Չհանշահի արշաւանքների տարիքները. հաւանօրէն նոյն է մեր Կիրակոսի հետ:

† Նոր Նիւթեր. 759.

†† Տաշեան Յուլի. 880.

††† Նոր Նիւթեր. Ար. 756. 764.

(1443) Թուին մի Ճաշոց, ԶԸ (=1459) Թուին մի Յայսմաուրք և ապա մի Աւետարան, մի երկրորդ Աւետարան ԶԺԳ (=1464) Թուին, մի ընտիր Ճաշոց Զ և Թ (=1460) Թուին Արծկէ քաղաքում, որ գտնւում է այժմ Մ. Աթոսում (№ 895/982), և պատկերազարդուած է «անյաղթ նկարող» տէր Մինաս կրօնաւորի կողմից*։ Թումա գրիչը ՊՂ. (=1441) Թուին գրում է մի Տօնացոյց և ՊՂԸ. (=1449) Թուին մի Աւետարան, որ Մինաս եպիսկոպոսի հետ յետոյ նուիրում են «փառաւորեալ տէր Գրիգոր կաթողիկոսին սուրբ էջմիածնի (Նօտարք. Փիրզ. 124/5, 162)։

ՊԶԴ (=1435) Թուին գրուած № 1403/1380 ձեռագրի մէջ, 226բ. ԹովմաՄեծօփեցին յիշում է մի այլ Յովհաննէս սարկաւազի (Արճիշեցի), որ «աւգնականութեւ աշխատեցաւ ի յղորդել զրոցս», երկու տարի նա ձրի աշխատում է Մեծօփայ վանքում և իւր ընկերակից Ստեփանոս դպրի հետ «միաբանութեւ յանձն առին զգիրս և յաւարտ հանին»։ Նոյն ձեռագրի մէջ մի այլ տեղ Թովման կրկին յիշում է «գամէնահէլ մանկունքն զՍտփնէս և զՅո՞վս աշկ՝ տք մեր, որ զգիրս ր՞դմ աշխ՝ տւր և ահիւ (Չաղաթին) գրեցին, և զհայրն ի՞րց զի՞պտ ք՞հ և զՄանգա՞սը»**։ Նոյն Յովհաննէսն (սարկաւազ Արճիշեցի) է, որ գրել է Թովմայի պատուէրով Մաշտոցի մի մասը՝ Հիւանդաց Օծման մասին, և թէ կեղծուած չէ յիշատակարանը վերջում. (Տաշեան Յուլ. 677)։ Մանգասարի որդի այս Յովհաննէսը ապագայում Արճէշ քաղաքում նշանաւոր գրիչ և գրչութեան ուսուցիչ հանդիսացաւ, որ միշտ երախտագիտութեամբ յիշում է Թովմային***։ Նա գրել է ՊՂԴ. (=1445) Թուին և մի աւետարան, որ այժմ սեպհականութիւն է Զմիւնիացի Սիմէօն էֆենդի Տ. Գառնիկեանի Իսկ Կարապետ քահանայի որդին՝ Ստեփանոս գործակից էր իւր հօրը ՊԶԶ. (1437) Թուին մի Յայսմաուրքի գրութեան ժամանակ (Փիրզալ. Նօտարք. 112 և մեր յիշատակարանների ժողովածուն)։ Ոմն Յոհաննէս «ի վանքս Մեծօփայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբիս և առ ուռն մեծ

* Անդ. 737. Նօտարք. 105. 152. 191. 195. 219 և 124/5. 462.

** Անդ. 760. 765.

*** Նօտարք. 485/6. 216. 250։ Նօտարք. 208/9 յիշում է ոմն Ստեփանոս վարդապետ, «փիլիսոփայ երիցական արհեստի և ծաղիկ ժամաւեղաց, և է վիտան ամենայն հին և նոր Կառկարանաց աստուածային գրոց գիտութեան, որ յար և նման է վարժապետին իւրոյ Թումայ վարդապետին»։ Կարող է այս Ստեփանոսը նոյն լինել Թովմայի աշակերտի հետ, որովհետեւ Մեծօփեցին էր ժամակարգութեան մէջ յայտնի հեղինակութիւնը։

րարունապետի թուժայ վարդապետի» գրել է ՊՀԷ (=1428) թուին մի Յայսմաուրք*։ Որ Յոհաննէսն է, որդի Յակոբ քահանայի, թէ Մանգասարի, թէ Յովհաննէս Բաղիշեցին՝ ՊԶԴ թուին մեռած արդէն, ասել չենք կարող։ Թովմայի աշակերտների կարգում վերոյիշեալ վարդապետների հետ ՊԶԴ (=1435) թուին յիշուած են Ներսէս և Ստեփանոս, «որ կան յաշխտութի ածաշունչ տառից»։ Սոքա կոչուած են «գրոց աշկտեալ որդիք»՝ Հերապետի, Յոհանի, Ղազար կրանաւորի, Արահամ փիլիսոփայի և Ներսէս եկեղեցւանի հետ**։

Յակոբ գրիչ ՊԿԷ (=1418) թուին գրել է Տաթևացու Քարողգիրքը Խառաքատայ վանքի Կարապետ վարդապետի համար, որի մէջ յիշում է «այլ և յետ քի երախտաւոր հոգևոր հայրն իմ զմեծ վճռն Գրիգոր (Տաթևացի), որ զսակաւ գիրս ուսոյց մեզ։ Նաև զուսուցիչն և զմարմնաւոր երախտիքն, զոր ունին ի վերայ մեզ (sic), զածապարփակ հոգին զթուժայ վճռն, որ զօրինակն շնորհաց և յաջողեաց»։ Նոյն Յակոբ գրիչն է, որ ՊԶԱ (=1432) թուին Երուսաղէմում գրելով Տաթևացու Հարցմանց գիրքը Մարտիրոս եպիսկոպոսի համար, խնդրում է յիշել «և զհգր զծնողսն մեր և զուսուցիչքն, զԳրիգէր մեծ վճռն, որ զՔաղաւածոյս է արբի և զթվմայ վճռն Մեծոփայ, որ անչափ և անեղբ խնամել է զիս հգր և մրմնւր»***։ Թովմայի գրիչ աշակերտների մէջ նշանաւոր է Կարապետ քահանան, Ստեփանոս դպրի հայրը, որ վերև յիշուեցաւ։ Նա գրել է մի Մաշտոց Տէր Յուսկան որդի օւխտի Մկրտիչ վարդապետի (Ողբեկենց) համար ՊԶԱ (=1432) թուին, մի աւետարան ՊԶԲ (=1433) թուին Արճէշ քաղաքում, ուր խընդրում է յիշել «և զուսուցիչն իմ զքաջ քարտուղարն թուժայ րարունապետն»։ ՊԶԶ (=1437) թուին մի Յայսմաուրք (իւր Ստեփանոս որդու գործակցութեամբ) Թովմայի աշակերտ Յովհաննէս եպիսկոպոսի օրինակից։ Կարապետ քահանան նահատակուել է Արճէշ քաղաքում իւր եղբայր և աշակերտ Վարդան քահանայի յիշատակարանի համաձայն†։ Աշակերտների թուում պէտք է յիշել և իւր եղբորորդիներին, որոնցից չորսը սարկաւագ էին, ինչպէս տեսանք վերև, և «գփոքր երիցանիս զՅիւր, զՍիւս և զՀերապետ», որ չգիտենք ո՞րն են վերոյիշեալ անուանակիցների հետ, թէ ոչ։

Թովմայի դասախօսութիւնների բովանդակութեան մասին մեր տեղեկութիւնները շատ աղքատ են. ըստ Կիրակոս Բանասէրի

* Անդ. 89.

** Նոր Նիւթեր. Ար. 759. 765. 760.

*** Զեռ. Ս. Էջմ. Մատ. № 2453/2445 եւ 4223/4125.

† Նօտարք 404. 402. 444. 469. 471/2.

«հանապազ չարչարէր զինքն ի յուսուցանել զմանկունս եկեղեցւոյ, ի սաղմոսն, ի յաղօթքն, ի շարական, ի գրագրութիւն, ի ժամակարգութիւն»։ Բայց այսքանով չէր վերջանում, ի հարկէ. թէև չենք կարծում, որ Թովման էլ Տաթևացու նման փիլիսոփայական և նուրբ գրեանց լուծմունքներով զբաղուած լինի իւր աշակերտների հետ, բայց Ս. Գրքի և եկեղեցական հայերի մեկնութեամբ անշուշտ։ Երկու այդպիսի գրքերի մասին հաստատուն տեղեկութիւն ունինք. առաջինը Իգնատիոսի Ղուկասու մեկնութիւնն է. «հարկեցին զմեզ եղբարքն զմեկնիչն տէր Իգնատիոսի դաս ասել» 1420 թուին, և երկրորդը Յովհաննու Յայտնութեան, որ բերել էր Երուսաղեմից Մկրտիչ Նահպետնց Մեծօրհնցին «վասն այն յուսոյն, որ գիրս ի դաստուն մտանէ»։ Թովման նորա փափազը կատարում է և ՊՀԶ (=1427) թուի գրած յիշատակարանի մէջ յայտնում, թէ «դասիւ զգիրս ի դուրս ելի»։ Այս հաստատում է և Ղաղար գրչի յիշատակարանով (Տաշեան. ցուց. 880). «Զի այս ամի (ՊՀԶ) գտեսիլ Յովհաննու աւետարանչին յայտնեաց մեզ դասիւ»։ Պէտք է ենթադրել, որ դասախօսութեան նիւթ է դարձրել նաև Պօղոսի Զորեքտասան թղթոց մեկնութիւնը Ոսկերեւանի և Եփրեմի «հաւաքեալ ի մի Աճաբան վճռացն մերոց», որ ընդօրինակել է տալիս Թովման և որի համար գրում է. «ի դուրս անկեալ ի դաստանէ ս՛ր վրժ՝ տցն մերոց մեծին Գրգրի Տաթևացւոյ և սրբոցն Սրգ՝ սի և Վճռայ նորին աշակերտի։ Եւ մեզ վերջնոցս տուրք և ողորմէ՛ր ավճեւեցաւ յառատածիր ավճեւացն ա՛յ»*։

Թովմայի երեսուն հինգամեայ վարժապետական գործունէութեան պտուղները միայն սոքա չէին անշուշտ, մեզ կմնայ յուսալ, թէ ժամանակը, բանասիրական աշխատանքը հետզհետէ երևան կհանէ իւր ժամանակի այս մեծ մարդու արդիւնաւոր գործունէութեան դեռ ևս ուրիշ անյայտ գործեր**։ Բայց այսչափս ևս բաւական է նորան ԺԴ—ԺԵ դարերի լաւագոյն վարդապետների շարքում դասել։ Նորա գործունէութիւնը պնահատելու համար եր-

* Ս. Էջմ. Մատ. Զեռ. № 1429/4419. 48ա եւ 81ա. Նոր Նիւթեր. Ար. 759

** Զմուռանք յիշելու, որ Թովմայի խնդրանք է Յակոբ Արիմեցին գրել իւր Տումարի մեկնութիւնը, ինչպէս եւ Յաղագս Ճիւղագրութեան կամ աղգականութեան աշխատութիւնները։ Զեռ. Մատ. Ս. Էջմ. № 1474. 27ա. Տեւ եւ Փրկդալեման Նօտարք. 458. 459. Տաշեան. Յուցակ. 471. 427. 625. 656. 946. Տարաբաղարար գրութեան ժամանակը որոշելու հնարաւորութիւն չունինք. յամենայն դէպս ՊՀԵ (=1426) թուականից առաջ, երբ մեռաւ Յակոբ Արիմեցին. տեւ. № 1429/4419. 204բ. յիշատակարանը։ Նոր Նիւթեր.

ըէք չպէտք է մոռանանք այն չար ժամանակը, երբ ապրում էր նա: Համեմատաբար խաղաղ էր միայն նորա վարդապետական գործունէութեան առաջին տասնամեակը. այնուհետեւ Պէ—ՊԶԶ (1421—1437) թուականները Սքանդարի, Շահուէհի, Զհանշահի մրցութիւնների և պատերազմների տարիներն էին. երկիրն աւերւում էր, ժողովուրդը կոտորւում, գերւում կամ կողոպտւում: Հանպամանքներից օգտւում էին նաև տեղական Դրդերը և աւերի ու յափշտակութեան ենթարկւում ամէն ինչ: Պակասը լրացնում է ՊԶ (=1431) թուականի մեծ սովը, ապա միջաստանյան գաւառներից ժողովրդի գաղթը դէպի Լոռի, Վրաստան: Թշուառութիւնն ու աղքատութիւնը վերջին ծայրն էր հասել. Թովման յաճախ ողորում է այդ վիճակը իւր պատմութեան մէջ, որին ենթակայ էր և ինքը իւր աշակերտներով: ՊէԹ (=1430) թուին նա ստիպուած է լինում փախչել Լիմ: Շահուէհի երկրորդ զայստեան ժամանակ ՊԶԵ (=1436) թուին փախչում է նախ Խլաթ, Արճէշ, Արծկէ...: Դրդերը վրայ են հասնում, «և սուր ի ձեռին ունելով կամէին առնաւարակ զամենեանս սրոյ ճարակ առնել: Իսկ մեզ ապաւինեալ յԱստուած, զամենայն մարմնաւոր գոյս ի բաց թողեալ, ի լերինս փախուստ առեալ, օգնութեամբն Աստուծոյ և շնորհաւք ազատեցաք ի ձեռաց նորա»*: Այս վերջին դէպքի մասին Թովման պատմում է նաև իւր ՊԶԴ (=1435) թուին գրած (սկսած) յիշատակարանի մէջ: Թովման փախչում է «ի լերինս Բաղիշու»: Ստեփանոս եպիսկոպոսը քահանաներով և ժողովրդով ընդառաջ է գնում փախստականներին և պտնում է նրանց «ի լեռոն Ուրտաբու»: Թովմայի և նորա աշակերտների համար յատկացնում է իւր վանքը՝ «քչիւք, հացով, տնամանով և ա՛մ մարմնաւոր պիտոյիւք»*: Թովմայի փախչելու թուականից (ՊԶԵ) Ստեփանոս գրչի յիշատակարանն ունինք մի Յայտաւուրքի մէջ հէնց այն վանքում գրուած, ուր ապաստարան էր գտել Թովման. «Յայսմ ամի մեծ վարժապետն Թովմայ և Կարապետ (Թովմայի մտերիմը և Ոռաբաստայ վանահայրը) եօթն վորդապետօք և այլ բազում աշակերտօք փախստեայ եկեալ ի գաւառէն Արճիշոյ՝ առ մեզ կային ժամանակ ինչ. և ի նոցին շնորհարաշխ և առատաբուխ իմաստիցն ըսողումք օգտեցան պէս պէս ուսմամք»***: Ստեփանոս եպիսկո-

* Թովմա Մեծ. սրմտ. 83, 83, 87—89, 90—93, 108—109, 110—112: Համ. եւ Ս. Էջմ. մատ. 2եռ. № 1429/1419, 81ա յիշատակարանը, ուր յայտնում է Թովման, Թէ. 92 տարի է, որ տոյ՞գ չէ եղել ի ծովու քայտս ամեն, այսինքն Պէ—ՊԶԶ թուականը.

** Նոր Նիւթեր. Ար. 765/4.

*** Նոստրք. 108.

սլոսի հիւրընկալութեան մասին յիշատակութիւն ունի ՊԶԹ թուին և Ներսէս արեղան (մի տարի յետոյ վարդապետ), Թովմայի վերոյիշեալ աշակերտը, որ իւր ուսուցչի հետ Մեծոփից Մատնավանք էր փախել և այնտեղ վերջացրեց Ասաքել Սիւնեցու Սահմանաց Դաւթի մեկնութիւնը. «Այ՛ս ևզեւ ի վանս Մեծոփայ և աւարտեցաւ ի վանս Մատնավանից, առ ոտս արքեպօսի Ստփնճի, որ յոյժ սէր և հայրու՝ ի եցոյց մեզ»*: Թովմայի փախուստն այստեղ երեք տարի տեկց**։ Այսպէս անցնում է Տարօնի Առաքելոց վանքը և ակա- նատես լինում վարդանանունով քահանայի մատնութեամբ Մուշի ամիրայի կատարած յափշտակութիւններին. «զի յայսմ ամի (ՊԾԸ=1439) տիեզերալոյս և քաջ բարունապետն Թովմա փա- խըստական էր ևզեւ յազգէն նետողաց, ի զաւառէն Արճիշոյ և եկեալ հանդիպեցաւ ի սուրբ ուխտն Ասաքեալք երկու վարդապե- տօք և բազում գրոց աշակերտօք»***։ ՊԶԹ թուականին արդէն Թովման պէտք է իւր վանքում լինէր. որովհետեւ ՊԼ թուականին նա ստացել էր Յովհաննէս Կոլոտիկ վարդապետից հրաւեր, մատ- նակցելու Էջմիածնի նորոգութեան ժողովին, իսկ այդ հրաւերը պատասխան էր իւր մի տարի առաջ նրան ուղարկած ողջունի նամակին†։ Բացի զորանից վերոյիշեալ Ներսէս արեղան իւր գիրքը գրել է «Նրամանաւ և արդեամբ» Թովմայի, Մատնավանքում. իսկ ՊԴ (=1441) թուականին նոյն Ներսէսը Հերապետ կրօնաւորի հետ Թովմային խնդրում է գրել Փաշամայր կնոջ համար մի աւե- տարան, որ պէտք է ի վայելս իւր ընծայուէր, արդէն Մեծոփայ վանքում†† և ժողովի գնալուց անշուշտ առաջ։ Ուշադրութեան արժանի է, որ այս աւետարանի յիշատակարանը Թովման թուա- գրում է «ի հայրապետութեան Եան Գրիգորի սէր էջմիածնի»։ Գրիգոր Մուսարէզեանի համար։

Գ.

Թովմայի կեանքի, ինչպէս և ընդհանուր Հայոց համար 1441 թուականը շատ մեծ նշանակութիւն ստացաւ։ Այս թուականի գարնանն էր, որ արևելեան վարդապետները վերջնական համա- ձայնութեան եկան Հայրապետական Աթոռ Սաից էջմիածին տե- ղափոխելու։ Այս միտքը երբ է ծագել Հայոց մէջ, իսկապէս որոշ էէ։ Բայց Գրիգոր Տաթևացու փորձերը Աղթամարցիներին հնա-

* Նոր Նիւթեր. Ար. 765.

** Թովմա Մեծոփ. պատմ. 109.

*** Ալիշան. Հայապատմ. մ. 549.

† Կատ. Թովմա Մեծոփ. Յիշատ. 54. 65.

†† Նոր Նիւթեր. Ար. 767.

դանդութեան բերելու ընդհանրական կաթուղիկոսին կամ Քաջ-
բերունեաց և Բզնունեաց կողմերի ժողովրդին Աղթամարցիներէ
նզովքից ժողովով ազատելու իրողութիւնը, մի նախապատրաստու-
թիւն էր միութեան մտքին: Թովման յիշում է այս գէպքը ոչ մի-
այն իւր պատմութեան, այլ և յաճախ վկայութեան բերուած ՊԾԹ
յիշատակարանի մէջ, համարելով այն Յեսու Նաւեայի Աւետեաց
երկիրը առաջնորդելու նման մի գործողութիւն*: Այսպէս, ուրեմն,
Թովման հայրապետական Աթոռի միութեան ջերմ կուսակից էր
դեռ ևս 1410 թուից: Նշանակալից է, որ միութեան գլուխ են
կանգնում և 1441 թուի ժողովի ղեկավար հանդիսանում նոյն
Տաթևացու երկու աշակերտները՝ Հերմոնի վանքի նշանաւոր վար-
ժապետ Յովհաննէս Կոլոտիկ և Թովմա Մեծոփեցին: Այդ գաղա-
փարը կոռել էր ու կոփուել Գրիգոր Տաթևացու դպրոցից ճիւ-
ղաւորուած Ժն. դարու այդ երկու գլխաւոր վարդապետարաննե-
րում: Փորձենք պարզելու Թովմայի դերը համազգային պատմու-
թեան մէջ առաջնակարգ նշանակութիւն ունեցող այս երևութի մէջ:

Թովման առհասարակ շատ համեստ է իւր անձի մասին տուած
տեղեկութիւններով. բայց նշաններից երևում է, որ նա շատ վաղ
ժամանակներից տողորուած էր Էջմիածնի նորոգութեան գաղա-
փարով. Աղթամարի կաթուղիկոսները նրա աչքում դեռ ևս 1410
թուից ապստամբ են և «յերկիրն պզեաց» (Աւետեաց) մտնելու
համազօր «ի միարն՝ ի և ի հնգղութ՝ գերադրական և ս՛ր աթոռ-
ոյն Գ՛րգրի Լուսաւորչին մերոյ» գալը*: Պէտ թուականի Ախալ-
ցխայի աւարից զնած «կոպողայի» մասին մտածում է, թէ «այս
Էջմիածնին է պատշաճ և ոչ այլ եկեղեցեաց, և ինձ մահ ոչ տացէ
Աստուած, մինչև բացեալ տեաից զգուռն Էջմիածնին»***: Այդ
թուականից նա երազներ է տեսնում Էջմիածնի նորոգութեան
մասին և պատմում իւր միաբաններին, ազացոյց, թէ այդ շարժ-
ման հոգին Թովմա Մեծոփեցին էր: Կիրակոս Բանասէրն էլ նոյնն
է հաստատում. «Սւ հանապազ խնդրէր յԱստուծոյ, զի Էջմիածինն
նորոգեսցի. կաթուղիկոս և թագաւոր նստցի յԷջմիածինն»†: Թով-
ման է առաջինը, որ Ասոյ չորս հպիսկոպոսներից նամակ է ստա-
նում հայրապետական Աթոռի անկման նկարագրութեամբ և
«սկիզբն արարեալ ողջունի նամակաց առ ամենայն ազգս, գալ

* Պատմ. 53. 32. Նոր Նիւթեր. Ար. 735. Թօփեան. Յուցակ-
2 եռադրաց Խաչիկ վարդ-ի. 1898. Վաղարշապատ. Ա. 97.

** Նոր Նիւթեր. Ար. 735.

*** Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Յիշատակարանը. 62: Համ-
Թովմ. Մեծ. Պատմ. 67/8.

† Նոր Նիւթեր. Ար. 743.

ամենայն միաբանութեամբ ի յօրհնութիւն էջմիածնին և ձեռնադրութեան կաթողիկոսութեան ամենայն հայկազեան սեռի»։ Այդ նամակներին արձագանգ է տալիս Յովհաննէս Կոլոտիկ, և Աղուբ բէկի հաւանութիւնն ստանալուց յետոյ՝ հրաւիրում թովմային զալ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու։ Այն երազներն ու տեսիլները, որ Աթոռի նորոգութեան նախօրեակներին տեսնում է թովման, և մասամբ նորա շրջապատի անձինք, բնորոշում են նորա գերն ու սրբազան ոգևորութիւնը Աթոռի նորոգութեան գործում*։

Թովման ստանալով Յովհաննէս վարդապետի հրաւերը, իւրայիններով՝ «վարդապետօք և եպիսկոպոսօք և քահանայիւք»՝ շտապում է էջմիածին, նախապէս հանդիպելով Վիրապի և Հաւուց Թառի վանքերը։ Թովմային ընկերացել էին Մկրտիչ Մեծոփեցի նահպետինց, Սառաբաստայ Կարապետ և Յովսէփ վարդապետները, Ղազար Բաղրիշեցի, Ստեփանոս և Յովհաննէս վարդապետներ Արծիէից, իւր աշակերտ Մեծոփայ կամ Արճիշու Յովհաննէս եպիսկոպոս, Վարպի Զաքարէ վարդապետ, չթուած աւելի երկրորդականները։ Այստեղ յիշուած վարդապետների մեծ մասը թովմայի ընկերներն էին կամ աշակերտները։ Թղթով միաբանուածներից էլ շատերը նորա ծանօթներն էին կամ բարեկամները, ինչպէս Բաղրիշու Ստեփանոս եպիսկոպոսը, Ս. Կարապետի, Առաքելոց, Վարպայ և Սախապատու եպիսկոպոսներն ու վարդապետները։ Ընտրութեան ժամանակ մեծամասնութիւնը թովմայի կողմն էր և նորընտիր կաթողիկոսն էլ Սառաբաստայ աշակերտներից և հաւանօրէն ենթարկուած թովմայի ազդեցութեան։ Այդ էր պատճառ, որ Յովհաննէս Կոլոտիկ Վիրապեցու դէմ Աղուբ բէկին զանգատելիս յայտնում է, թէ «ես ոչ եմ ձեռնադրեալ զնա, այլ թովմէն և ընկերք նորին»*։ Այդ խօսքերը ճշմարիտ են միայն այն մտքով, որ թովմայի կուսակիցները զօրեղ էին ընտրութեան ժամանակ։ Ժամանակակից մի ուրիշ յիշատակարան ՊՂԱ (=1442) թուականից յայտնում է, թէ «ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց զլուխ մեծ բաբունապետն թովմայ և Յովհաննէս վարդապետ»***, թովման իբրև պատասխան Յովհաննէս վարդապետի խօսքին իւր համեստ մասնակցութիւնն է պատմում բուն ձեռնադրութեան ժա-

* Կոստանեանց. Թովմա Մեծ. Յիշատ. 65—65.

** Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Յիշատակարանը. 80.

*** Պատմ. Առաքել վարդապետի Դարբնեցոյ Վաղարշապատ.

մանակ*, բայց դորանով իրողութիւնը չէ փոխուում: Նորա ազգեցութեան մի նշան էլ այն կարելի է համարել, որ ընտրութիւնից յետոյ նա իւր աշակերտներով հաստատուում է Էջմիածնում:

Թովման հասել էր իւր մեծ նպատակին. ուստի և հասկանալի է նորա ջանքերը Էջմիածնի նորոգութեան գործում: «Բազում աշխատութիւնս կրեաց ինքն վարդապետն և իւր աշակերտքն, գրում է Կիրակոս Բանասէրը, ի սրբել տաճարացն Էջմիածնին և Հոփսիմին և Գայիանին և ի շինութիւն պարսպացն, խցիւրուն և տանցն. զի ինքն անձամբ աշխատէր և զամենայն յաւժարեցուցանէր ի շինութիւնն»**: Շինարարական այս գործունէութեան մասին ակնարկութիւն ունի և Թովման ինքը իւր Յիշատակարանի մէջ: Հէնց կաթուղիկոսի ձեռնադրութեան օրը «առեալ ի ձեռն զստաջին տան հիմնարկութիւնն եւ արկի եղբարքք իմով», որով կատարում է տարիներ առաջ նորա տեսած երազը***: Այս դէպքը յոյց է տալիս մի և նոյն ժամանակ. թէ Թովմայի սրտին ինչպէս մօտ էր Էջմիածնի վերանորոգութեան զաղափարը և ինչպիսի՜ ջերմ մասնակցութիւն է ունեցել այդ մտքի իրագործման մէջ:

Բայց նիւթական այս շինութիւնից աւելի զնահատելի է Թովմայի մի ուրիշ գործը Էջմիածնում. նորընտիր կաթուղիկոսը Կիրակոս Բանասէրի ասելով «Գ աւր անսուազ անցոյց զսուրբ և զհրաշափառ ծնընդեանն Քրիստոսի և պատարազ մատոյց Գ աւր հետ իրերաց և արձակեաց զԱղթամար ի զուր և յանպատշաճ անիծիցն. զոր վասն փառամոլութեանն արարին Կիլիկեցիքն†»: Երկար դարերի հակառակութիւններից և փոխադարձ բանադրանքներից յետոյ՝ հայրապետական իշխանութեան միութեան, գերազրական Աթոռի հեղինակութեան գաղափարի նուիրագործումն էր այս Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ. նորընտիր կաթուղիկոսը գիտակից էր բոլէի սրբութեան, որ այնպիսի երկիւղած և բարեպաշտ նախապատրաստութեամբ իրագործեց, բայց նորա յետեր կանգնած էր Թովման, այս գաղափարի իսկական ներկայացուցիչը: Թէև վերջինս միայն անցողակի կերպով է յիշում այս դէպքը իւր Յիշատակարանում—«զբանադրութիւն և զկապանք կղզւոյն Աղթամարայ յօրհնութիւն փոխեաց» (Կիրակոս կաթողիկոսն)†† և առանց իւր մասնակցութիւնն այդ մեծ գործում մատ-

* Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Յիշատ. 80.

** Նոր Նիւթեր. Ար. 747/8.

*** Կոստանեանց. 65.

† Նոր Նիւթեր. Ար. 745.

†† Կոստանեանց. 84/5.

նանշելու, բայց Կիրակոս Բանասէրը յատուկ շնչտում է այդ իրողութիւնը: «Եւ Տէր Կիրակոս կաթուղիկոսն զամենայն անէծքս երարձ ի բանադրողաց և ի բանադրելոցն»: «Եւ յայս որ պատճառ և միջնորդ և ազնական աղատութեան և աւրհնութեան լուսաւոր հոգին եղև, մեծ վարդապետ Թովմա»^{*}:

Բայց Թովմայի գործունէութիւնն էջմիածնում երկար չտևեց, ինչպէս Կիրակոսի կաթուղիկոսութիւնը: Հետզհետէ կազմուեցաւ հակառակ մի կուսակցութիւն ընդդէմ Վերապետու՝ Յովհաննէս Կոլոտիկ վարդապետի գլխավորութեամբ, որոնց և յաջողեցց տապալել նորընտիր կաթուղիկոսին և նորա տեղը Գրիգոր Մակուեցուն դնել: Աղուբ բէկի մօտ եղած քննութեան ժամանակ ներկայ էր և Թովման, որի քննորդի Մերունը երիտասարդական տաքութեամբ չկարողանալով համբերել հակառակորդների զրպարտութիւններին, բարձր ձայնով ասաց. «Սորա ամենեքեան անհաւատ գոլով և ստախօս քրիստոնեայք, ոչ են ճշմարիտ, այլ խարերայք»: Բայց հակառակորդներին տուած կաշառքը Աղուպ բէկին վճռում է գործը և հաստատում Գրիգոր Մակուեցին»^{**}: Այդ է պատճառը, որ մի ժամանակագրութիւն, որ Դաւրիժեցին առել է իւր պատմութեան մէջ, Մակուեցու կաթուղիկոսութիւնը համարում է «զաբալով և թուրքով»: Փերդալէմեանը այս յիշատակարանի հեղինակ Թովմային է համարում. այնտեղ խօսք կայ հեղինակին և Սարգիս վարդապետին տուգանելու մասին. «և զինչ վատութիւն, որ արարին Կիրակոսի կաթուղիկոսին և Սարգսի վարդապետին (Սալնապատեցի) և ինձ, Աստուած թողու զմեզս նոցա»^{***}: Այս դէպքը պատմում է և Թովման, Սարգսի հետ աւելացնելով և Կիրակոս Ռշտունցու անունը, որոնք Անտոն և Զաքարէ հպիսկոպոսների մատնութեամբ տուգանքի ենթարկուեցան, բայց իւր մասին խօսք չկայ: Այս հանգամանքը մտածել է տալիս, թէ մի գուցէ յիշատակարանի հեղինակը Կիրակոս Ռշտունցին է: Ինչպէս էլ լինի, Թովման շատ վիշտ կրեց այդ դէպքի պատճառով, որ պատմում է և Կիրակոս Բանասէրը հակիրճ խօսքերով: «Եւ շատ նեղութիւն և վիշտս կրեաց վասն էջմիածնին և Կիրակոս կաթուղիկոսին համար յանաւրինաց և ի սուտ եղբարց»[†]:

Կիրակոս Բանասէրի տակով՝ Թովման էջմիածնում երկու տարի է մնացել. «տարի մի Կիրակոս կաթուղիկոսովն և տարի մի

* Նոր Նիւթեր. Ար. 746.

** Վաստ. «Յիշատակարան»-ի Գ. գլուխը.

*** Առաքել Դաւրիժեցի. 628: Նօտարք. 450.

† Նոր Նիւթեր. Ար. 747.

Գրիգոր կաթողիկոսովն»*: Մեծոփեցին ինքն էլ իւր Յիշատակաբանի մէջ, մի քանի ձեռագիրների համեմատ** , յայտնում է. «Եւ ամ մի իւրման ի դուռն սուրբ էջմիածնին դեգերեցայ աշակերտօք և վարդապետօք (ոմանք «աշակերտք և վարդապետք») և վասն ասացեալ պատճառացս թողի և փախեալ»։ Այս խօսքերից պարզ է, որ Թովման երկու անգամ է հղել էջմիածնում, մի տարի Կիրակոսի ընտրութիւնից անմիջապէս յետոյ, և ապա Կիրակոսի անկման ամիսներից մինչև Գրիգոր Մակուեցու առաջին ամիսները։ Կիրակոսի ընտրութիւնը կատարուեցաւ ՊՂ թուականի գարնանը, Հոգեգալստեան տօնից առաջ և տեւեց երկու տարի։ (ՊՂ թուի մարտին կաթողիկոսը դեռ ևս Գրիգոր Մուսարէգեանն էր)***, ՊՂ թուի գարնանը պէտք է սկսուած լինի ապստամբական շարժումը Կիրակոսի դէմ. գուցէ և հէնց այդ առթիւ Թովման էջմիածին էր եկել երկրորդ անգամ, թէև նա հեռացել էր կաթողիկոսի «կամապաշտութեան» և շրջապատողների «ազահութեան և զոդութեան» պատճառով։ Յամենայն դէպս նա ներկայ էր, ինչպէս տեսանք, Կիրակոսի դէմ կատարուած դատավարութեան ժամանակ։

Թովմայի Մեծոփայ վանքը վերադարձի մասին անմիջական տեղեկութիւն չունինք. բայց ՊՂԳ թուականի սկզբներին պէտք է արդէն էջմիածնից հեռացած լինէր։ Մենք բաւի իսկական նշանակութեամբ իրական չինք համարում Թովմայի միտարի մնալու լուրը Գրիգոր Մակուեցու օրով, որովհետև վերջինս էլ համարում է Թովմայի աջքում իբրև մեղսակից Կիրակոսի քսորման։ ՊՂԴ (=1445) թուականից ունինք Մանկասարի որդի Յովհաննէս գրչի երկու յիշատակարան Թովմայի անուան յիշատակութեամբ՝ Մեծոփայ վանքում††, նորա մահը հանդիպեցաւ ՊՂԵ (1446) թուի, մայսի 15-ին, Մասեաց ստորոտի Արկուռի գիւղում, երևի քարոզութեան դուրս եկած ժամանակ, ինչպէս սովորութիւն ունէր երբեմն†††, Թովմայի եղբայր Գաւրգի մեկիւք և աշակերտները մարմինը փոխադրեցին Մեծոփայ վանքը և թաղեցին նոյն վանքի նշանաւոր վարդապետներին,

* Նոր Նիւթեր. Ար. 748.

** Կոստանեանց. 88։ № 1712/1774. 276ա։ № 1706/1769. 425ա։ № 1697/1799. 431ա։ № 1705/1768. 340բ։

*** Կոստանեանց. 75. Կիրակոս Բանասէր Ար. 745. Նօտարք 125. 424. 428. 429. 431/2.

† Կոստանեանց. 79.

†† Նօտարք 147/8. ևւ մեր ժողովածուն. Զմիւռնիացի Արմէօն Էֆենդի Տ. Գառնիկեանի աւետարանից.

††† Կիրակոս Բանասէր. Ար. 748—749. Համ. Ար. 757.

Մխիթար Սասնեցու* և Մովսէս «քաջ քարտուղարի» (Արծէացի) կողքին: Ըստ Փիրղալէմեանի դերեղմանի վրայ արձանագրուած է. «Սաչս կանգնեցաւ ի բարեխօսութիւն թուամաս մեծի բարունապետի ամենայն Հայոց, որ զնաց ի նորոգումն սուրբ Էջմիածնի և փոխեցաւ առ Աստուած թվ. ՊՂԶ»: Ուրիշ տեղ Փիրղալէմեանը ծանօթութիւնների մէջ թովմայի մահուան տարեթիւը ՊՂԷ համարում**», որ պարզ սխալ է: Մենք այդ սխալը արձանագրութեան եւ և է տառերի շփոթութեամբ կրացատրէինք, եթէ գերեզմանաքարի ՊՂԶ թուականը չլինէր: Գուցէ և այս տպագրական կամ անուշադրութեան սխալ է: Յամենայն դէպս կասկածի տեղիք չկան չէ կարող կիրակոս Բանասէրի տուած թուականի մասին, որ այնքան մօտ էր թովմային և իրազեկ նորա կեանքի բոլոր մանրամասնութիւններին:

Դ.

Թովմայի գրական գործունէութիւնը նոյնպէս նշանաւոր էր ժամանակակիցների համեմատութեամբ: Նորա երկերի պսակը «Պատմութիւն Լանկթամուրայ» աշխատութիւնն է, որ 1860 թուին հրատարակել է Փարիզում Կարապետ վարդ. Շահնազարեան***: Ջեռագիրների մէջ այդ աշխատութեան վերնագիրն է. «Պատմութիւն համառօտարար վասն արևելեան թագաւորացն պղծոյն և չար գազանին Լանկ թամուրայ և այլոցն, զոր արարեալ է քաջ վարժապետին թումայ վարդապետին»:

Թովմայի մի երկրորդ աշխատութիւնը նորա «Յիշատակարան» է, որ հրատարակել է Կ. Կոստանեանց†: Այս երկրորդն իսկապէս առաջին շարունակութիւնն է, սահմանափակուած միայն Աթոռի նորոգութեան խնդրով, և կարող էր առաջին հետ մի ամբողջութիւն կազմել: Ջեռագիրների մէջ միշտ կցուած է այն Պատմութեանը և այնպիսի ընդհանուր վերնագիր չունի այդ երեք գլուխներից բաղկացած աշխատութիւնը, ինչպէս հրատարակիչն է տուել: Նոքա երկուսը միասին տալիս են մօտ վաթսուն տարուայ պատմութիւն, ինչպէս և զբնլ է թովմայի կենսագրութեան հեղինակ կիրակոս Բանասէրը. «Եւ զբնաց պատմութիւն Կ տաւրոյ, ի ՊԼԵ թուականէն մինչև ի ՊՂԵ ամի կատարման իւրոյ, սկիզբն ի թօղթամիշ զանէն և ի թամուրէն առեալ և ի կատարումն Զհանչէն

* Սա եւս Մեծոփայ վանքի մեծ վարդապետներից մէկն էր. տես մեր տետրակը. Մխիթար Սասնեցի. Վաղարշ. 4899 Թ.:

** Նոտարք 156. 185. 191.

*** «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ Յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծորեցոյ»: Felix Nève-ի աշխատութիւնները Թովմայի մասին տ. 2 արք. Մատենագիտութիւն. Վենետ. 212:

† Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը. Թիֆլիս. 1892.

վճարեցաւ*։ Լանկթամուրի պատմութիւնը վերջանում է 1440 թուով, իսկ «Յիշատակարանը» տալիս է մեզ ՊՂ—ՊՂԲ թուերի դէպքերը Էջմիածնի հայրապետական Աթոռի վերանորոգութեան մասին։ Բայց եթէ Կիրակոսը ՊՂԵ թուականով է վերջացած համարում, պատճառն այն է, որ Թովման իւր «Յիշատակարանի» վերջին դուխը դրի է ՊՂԴ թուականի վերջերին կամ ՊՂԵ թուականի սկզբներին**։

Այդ երկու աշխատութիւնները ԺԴ. դարու վերջերի և ԺԵ-ի առաջին կէսի համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող աղբիւրներ են։ Նոքա իւրեւ պատմական երկեր շատ թերութիւններ դնին. ոչ միայն երևոյթների իրար կապակցուած և պատճառաբանական զարգացման նկարագրութիւններ չեն, այլ շատ անգամ պատմութեան ընթացքը խճողուած է դէպքերի խառնափնդոր դասաւորութեամբ և մինչև սնոտիապաշտութեան հասած դիւրահաւատ բացատրութիւններով։ Թովման իւր ժամանակի մարդն է, այն էլ վանական մթնոլորտում կրթուած, մանաւանդ որ իւր պատմութիւնը մեծ մասով յիշողութեան վերայ է հիմնած և ծերութեան հասակում՝ 50 տարին անց՝ սկսած***։ «Յիշատակարանն» էլ պատմութեան նոյն առաւելութիւններն ու պակասութիւններն ունի. այդ մեծ երևութի ծագման և ըմբռնողութեան պատճառաբանութիւնների և կշռադատութիւնների մէջ թոյլ և մակերեսու Բայց և այնպէս պատմութեան համար նոքա անգնահատելի աղբիւրներ են իբրև ժամանակակից և ականատես անձի նկարագրութիւն, առանց որոնց մեր տեղեկութիւնները թերի կլինէին ժամանակի այնպիսի դէպքերի մասին, որպիսին արինաբերու Լանկթամուրի և նորա յաջորդների արշաւանքներն են և հայրապետական Աթոռի վերանորոգութիւնը Էջմիածնում։ Թէպէտ բազմաթիւ յիշատակարաններ ունինք ձեռագիրների մէջ այդ շրջանի համար, բայց նոքա կցկտուր են և պատմութեան ընթացքի համար լիովին զաղափար չեն տալիս։ Թովմայի պատմութիւնը ազդային շրջանակից դուրս հանրամարդկային պատմութեան համար ևս մի կարևոր աղբիւր է, Լանկթամուրի նման պատմական խոշոր անձի հետ կապուած յինելով ուստի և գիտնականների ուշադրութեան արժանացած։ Ոչ պակաս կարևոր է «Յիշատակարանը» իբրև Հայոց եկեղեցական պատմութեան այդ առաջնակարգ երևութի միակ ամբողջական նկարագրութիւն։

Պատմական երկերի կարգում պէտք է դնել և նորա փոքր յիշատակարանները, որոնք ոչ միայն Թովմայի կեանքի այլ և այլ կողմերն են լուսարանում, այլ և պատմական և մատենագրական երևոյթներ։ Այդ յիշատակարաններից մի քանիսի մէջ նկարա-

* Նոր Նիւթեր. Ար. 743.

** Առտանեանց. 86. *** Պատմ. 44.

գրուած են նոյն իրողութիւնները, ինչ որ և Լանկթամուրի պատմութեան մէջ, բայց միշտ նոր գծերով և մանրամասնութիւններով: Ներկայիս հրատարակուած ենք այստեղ մեր մատենադարանի №№ 2065, 1380, 3892 և Երուսաղէմի № 149 ձեռագիրների յիշատակարանները (Գ. Ե. Է. և Գ. Նոր Նիւթերի մէջ, միւսները ուրիշների զրածն են, բայց Թովմայի մասին տեղեկութիւններով): Գ. յիշատարանն օրինակ, գրուած ՊԾԹ (= 1410) թուին, չառ թէպէտ պատմական-մատենագրական է Տաթևացու կեանքի վերջին տարուայ վարժապետական և գրական գործունէութեան, Թովմայի վարդապետական աստիճան ստանալու և նորա հոգևոր և մարմնաւոր հարազատների մասին տուած տեղեկութիւններով: Նոյնպէս շատ կարևոր է Եւով նշանակուած յիշատակարանների խումբը (№ 1403/1380) Թովմայի հոգևոր և մարմնաւոր հարազատների, Շահուհի և Սքանդարի և իւր փախստեան մասին դէպի Բաղէշի կողմերը և՛: Բայց մեր հաւաքածներով չի սահմանափակուում Թովմայի յիշատակարանների թիւը. նա իւր ժամանակի յայտնի «քաջ քարտուղար»-ներից կամ գրիչներից մէկն էր և գրչութեան ուսուցիչ. իւր արտագրուած ձեռագիրների վերջում անշուշտ թողել է յիշատակարաններ*, որոց նմուշներն ունինք ձեռքի տակ: Պէտք է հետամուտ լինել, երևան հանել և մատչելի դարձնել հայ բանասիրութեան: Հէնց այս տողերը գրուած էին և յանձնուած տպագրութեան, երբ մեր ձեռքն ընկաւ № 558/590 ձեռագիրը, արտագրուած Թովմայի պատրաստած օրինակից, «ձեռամբ յոգնամեղ և բազմալէր ոգոյ Յոհան գրչի Սրեցոյ»: Կիրակոս Բանասէրից գիտէինք, թէ Թովման «գրեաց ընտիր և անսղալ աղաթամատոյց և մեկնիչք և տաւնացոյց ի լաւ օրինակաց»: Եւ ահա այս ձեռագիրը և նորա մէջ պահուած Թովմայի յիշատակարանը** մեզ լիովին տեղեկութիւն են տալիս այդ մասին: Յիշա-

* Տաշեան. Յուցակ, 735. Թովման 1454 թուին գրել է Աստուածաբանի «Բ՝ս ծնեալ» ճառի մեկնութեան որոշ մասերը եւ համառօտ յիշատակարան աւելացրել վերջում: Թովմայի գիրը տես «Շողակամ» հայադիտական ժողովածու Ա. Գիրք, մեր աշխատութիւնը. «Փարտւղ հայ հնագրութեան», Տախտակ 2Բ. պատկ. 156.

** Մատ. Ա. Էջմ. № 558/590. 202ա. Թումայ վարդապետին է. «Արդ ես մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ Թումայ անուն պիտակ վրդայ ի Քաջբերունեաց զաւտէ ի ս՛ք ուխտէն Մեծոփայ. ի կարգէ աշակերտաց մեծ վարժապետացն Սարգսի եւ Վարդանայ եւ Գրգրի Տաթևացոյ: Սրբազրեցի զգիրս հասարակաց աղօթից եւ յիններորդ (sic) մասն բաժանեցի եւ ետու ի ձեռս մանկանց եկեղեցւոյ. վ՛ս որոյ յերես անկեալ, աղաչեմ պաղատանօր ք՛սակիր եղբարցդ, որ աւրինակէք կամ ուսանիջիր

տակարանից տեղեկանում ենք, որ Թովման սրբազրել է «զգիրս հասարակաց աղօթից և յիննեքորդ (sic) մասն բաժանեցի»։ Յիրաւի ամբողջ ժամակարգութիւնը, բացի պատարագից, ինն մասի է բաժանել։ Դաւիթ Բաղիշեցու խօսքերից, որ նոյնպէս յիշում է Աղօթամատոյցը սրբազրելու մասին*, դժուար է պարզ հասկանալ, երբ է սրբազրել, Երևանից (1410 թ.), թէ էջմիածնից (1442/4) Մեծոփ վերադառնալուց յետոյ։ Դաւիթ Բաղիշեցին, հաւանօրէն, ուրիշ աղբիւր չէ ունեցել ձեռքի տակ այս խնդրի համար, բացի Կիրակոս Բանասէրից։ Մենք հաւանական ենք համարում առաջինը։ Թովման գրել է նաև Կրիգոր Խլաթեցու վկայարանութիւնը, երկու Կարապետների խնդրանօք, որոնցից մէկն անշուշտ Խառաքաստայ վանահայրն է, իսկ միւսն անյայտ։ Այս վկայարանութիւնը տարբեր է նորա տուած տեղեկութիւններից Լանկութամուրի պատմութեան մէջ**։

Թովմայի գրական աշխատութիւնների մէջ պէտք է յիշել և նորա «Խրատք յաղագս պաշտամանց եկեղեցեաց Հայաստանեայց», որ արդէն անցել է տպագրուած ժամագրքի և Տօնացուցի մէջ։ Սակայն Կիրակոս Բանասէրը Թովմայի ժամակարգութեան մէջ արած բարեփոխութիւնների մասին աւելի տեղեկութիւն է տալիս, քան այդ «Խրատք»-ը, ինչպէս Աւետեաց տօնի և Սուրբ Աստուածի մասին։ Թէ այս և թէ միւս բարեփոխութիւններով Թովման նորամուծութիւններ չէ արել, այլ առել է նախնեաց կարգաւորութիւններից. «Զի ես զստոյգն և զճշմարիտն ի բերանոյ սուրբ հաւրն լսեցի, թէ զինչ որ ի ժամատեղս կարգեալ եմ, զմինն ոչ եղեալ եմ յինչն, այլ յառաջին սուրբ հարցն իմ առեալ և եղեալ ի գրի»***։

զնկարագիր րանիս, այլ մի այլայլք աղաչեմ եւ զսակաւ յիշատակարանս գրեսցիր. զի յամբնց ճանաչեալ լինի այս օրինակս, զի եւ դուք գրեսցիր ի զիրս կենաց եւ զմեզ անմոռաց յիշմամբ յիշեսցիր յաղօթս ձեր։ Զի եւ ինքն քսեալս ածն մեր ծիր մեղացն թողու՞թի շնորհեսցէ եւ ի չարեաց ազատեսցէ եւ ի գործս բարիս առչն ըղեսցէ եւ քի փութ յետնս յետնից ամեն»։

Այս միւսնոյն յիշատակարանը մէջ է բերում եւ Փիրղալէմեան իւր Նօտարքի մէջ, եր. 488, բայց փոփոխութեան ենթարկուած։ Յիշատակարանի շարունակութիւնից այնպէս կարելի է մակարերել, թէ հեղինակն ապրում էր Զէ (=1438) թուին եւ նա Մուրատի ու Մարգարտի որդին է. մինչդեռ վերջինս արտադրող գրիչն է միայն։

* Թօփմեան. Յուցակ Զեռագրաց Խաչիկ վ. ի. 98.

** Փիրղալէմեան. Նօտարք 77։ Ալիշան Հայապատում 362։

*** Նոր Նիւթեր. Ար. 742—743.

Այստեղ խնկապէս պէտք է վերջանար մեր խօսքը. բայց Թովմայի գործունէութեան արժէքը չափելու համար հետաքրքրական է լսել նորա ժամանակակիցների կարծիքները: Դոցանից մի քանիսը տեսանք վերեւ, երբ նորա աշակերտների մասին էինք խօսում*: Կարապետ գրիչը ՊԶԱ. (=1432) Թուին խնդրում է «յիշել ի բարին Քրիստոս զերջանիկ և զքաջ հոգեւորն և զտիեզերալոյս բարունին զԹովմայ». ընդարձակ է խօսում նա յատկապէս իւր գրած մի Յայսմաւուրքի յիշատակարանում, անուանելով նորան «առաջնորդ երկրիս Քաջբերունւոյ և ամենայն քրիստոնէից ազգի», «մեծ հոգեւոր», «քաջ քարտուղար», «ճշմարիտ քարոզող ազգիս Հայոց և պարծանք ամենայն վարդապետաց և կրօնաւորաց»*: Ներսէս արեղան ՊԶԹ. (=1440) Թուին իւր յիշատակարանի մէջ Թովմային անուանում է «հոգիւնկալ» և «ածարան վարդապետ», «խարաղնաւարք ճգնաւոր», «որ փայլէ ի Ժճկիս մերում իբրեւ զարե՞գէն պայծառ ի կամարս երկնից յերկիրս Քաջբերունւոյ»***: Թումա գրիչը ՊՂ. (1441) Թուին անուանում է նորան «տիեզերալոյս վարդապետ»†: Յովհաննէս գրիչ որդի Մանգասարի Արճիշեցին ՊԶԴ. (1435) Թուին խնդրում յիշել. «եւս առաւել զերեւելին ի մէջ ամի զլուսատուն ազգիս, զածարան և զսբ բարունապետն, զհեզահոգի և զքաղցր վարդապետն Թովմա. զոր Տ՛ր Ա՛ծ ջահ անշիջանիկ պահեսցէ զնա և հաստատուն ի վերայ գաւազանի իւրոյ»††: Նոյն գրիչը ճաշոցում 1457 Թուին յիշում է «և զերախտաւոր ուսուցիչն իմ զսուրբ վարդապետն Թումայ մեծ բարունին»†††: Յովհաննէս գրիչ որդի Յակոբ քահանայի ԶԸ. (=1459) Թուին գրած Յայսմաւուրքում յիշում է «Նաև զտիեզերալոյս բարունապետն զԹումայ Մեծոփայ վանաց մեծ վարդապետն, որ բազում աշխատանօք ուսուցեալ է մեզ զարուեստ գրչութեանս»: Նոյն Թուականին նոյն խօսքերով յիշում է և իւր գրած Աւետարանի յիշատակարանի մէջ†*: Սրանց վերայ պէտք է աւելացնել և Կիրակոս Բանասէր վարդապետի կենսագրականը, ուր դրուատում է իւր վարդապետի գիտնականութեան հետ նաև նորա կեանքի սրբութիւնը, «արդարութեամբ քաղաքավարեալ ի

* Անդ. եր. 742 (5). Այս տետրակի մէջ. ԺԷ.

** Փիրղ. Նօտարք 404. 411.

*** Նոր. Նիւթեր. Ար. 763.

† Նօտարք. 423.

†† Աւետարան Զմիւռնիացի Սիմէօն էֆ-ի Տ. Դառնիկեանի, մեր Յիշատակարանների (անտիպ) ժողովածուից:

††† Նարք. 483օտ

†* Անդ. 494. 495.

մանկութենէ մինչև ի խորին ծերութեանն»։ Ամենքի խօսքի մէջ, լինի այդ նորա աշակերտների կամ ոչ աշակերտների կողմից, երևում է խորին յարգանքի արտայայտութիւն դէպի նորա անձնաւորութիւնը։

Թող այս փոքրիկ աշխատութիւնն էլ երախտագիտական մի փոքրիկ առհաստիցայ լինի արդիւնաւոր վարդապետի յիշատակին։

Կիրակոսի «Պատմութիւն մեծի ըրբունապետին Թումայի» հրատարակում ենք հինգ ձեռագրի համեմատութեամբ։

Ա. № 1705/1768, անթուական, գրուած նօտրգրով, թղթի վերայ, հաւանօրէն ժէ. դարու վերջի գործ։ Գրիչն է Յովսէփ արեղայ և ստացողը «Գօրեցի Բարսեղ եպս ի պայազատ յազգէն Թումանեցի կոչեցեալ»։ Յիշատակարան 162ա. 289ա. 340բ. 357ա.

Բ. № 1706/1769, անվարժ բոլորգրով, թղթի վերայ, գրուած Յակոբ քահանայի ձեռքով. «Ի թվին հայց ռճժգի. (=1664) եւ յամսեանն յուլիսի ԻԴ. օրն բճիթի աւարտ եղաւ (sic) ի դունս ս՛ր Կաթողիկէ ա՛ծածնին ի քաղաքն Փայտակարան, որ կոչի Տփլիս»։ 438բ.

Գ. № 1712/1771. Նօտրգիր, Յովհաննէս Բանասէրի ձեռքով «Ի ՌԼԹ (=1590) թվինիս»։ 272ա։ Մնացածը գրուած է տարբեր նօտրագրով Արխատակէս Խարբերդցու ձեռքով «Ի թվին ՌՃ (=1651)։

Դ. № 1697/1899, թղթի վերայ, բոլորգրով։ «Գրեցաւ ի մերում Թ՛վինւթ՛ես. Ռ. Ճ և ի ԻԵ (1676) ամին, ձեռամբ տ՛ր Պօղոսի Գաւառցոյ», Ամիրդօլու սուրբ Յովհաննէսի վանքում, «Վր՛դնյ մեծի հոետորի Բաղիշեցւոյ վր՛գալի» հրամանով։

Ե. № 1703/1486, գրուած թղթի վերայ, նօտրգրով, Ղազար Բանասէր գրչի ձեռքով ՌՊԶ=1597 թուին, իւր հոգևոր եղբօր Տ. Եղիա Բաբերդացու ձեռնտուութեամբ. 196բ. 211ա.

Ա. Զ. Դ.

Նոր Նիւթեր Ար. 765 յիշուած Մկրտիչ վարդապետը մեռնում է ՊԶԹ (=1440) թուին. այն ինչ անուշադրութեամբ նոյն ենք համարել Մկրտիչ Նահպետեցի և ՊՂ թուին էջմիածնի Ժողովին մասնակցողի հետ (եր. 67—84)։ Հաւանօրէն այդ Մկրտիչը Հոգձեցին է։

Գարեգին վարդապետ